

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ «ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ

ԱՇԽԱՐՀԸ» ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ԱՌԱՐԿԱ

ԴԱՍՎԱՐ (ՄԱՅՐԵՆԻ, ՄԱԹԵՄԱՏԻԿԱ)

ՀԵՂԻՆԱԿ

Ժաննա Երեմյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

Շինուհայրի միջնակարգ դպրոց

*Աշխատանքը թույլատրված է պաշտպանության*

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝

Հ. Ս. Ալավերդյան, ԳՊՀ դասախոս

ԳՈՐԻՍ 2023

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	3
Նախագծային մեթոդի սահմանումը.....	5
Նախագծային աշխատանքի օրինակ.....	9
Եզրակացություն.....	15
Օգտագործված գրականության ցանկ.....	16

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Հետազոտության թեմայի արդիականությունը:** Նախագիծ /Projet/ բառը ֆրանսերենից թարգմանված նշանակում է «դեպի առաջ»: Այն կոչվում է նաև խնդիրների մեթոդ: Հեղինակն է Ջոն Դյուին:

Նախագծային մեթոդի գաղափարն արդի ժամանակաշրջանում դառնում է լիարժեք զարգացած և կրթական համակարգի ինտեգրված բաղադրիչ: Դրա էությունն է խթանել երեխաների հետաքրքրությունը որոշակի խնդիրների նկատմամբ, այն ներառում է որոշակի քանակությամբ գիտելիքների տիրապետում, մեկ կամ մի շարք խնդիրների լուծում և ձեռք բերված գիտելիքների կիրառություն:

**Հետազոտական աշխատանքի նպատակն է՝ ցույց տալ,** որ նախագծային ուսուցումը ուսուցման մի մեթոդ է, որի իրականացման ընթացքում սովորողները ներգրավվում են կարճաժամկետ կամ երկարաժամկետ աշխատանքներում, որոնք պահանջում են ուսումնական տարբեր առարկաներին առնչվող և իրական կյանքում հան դիպող խնդիրների համալիր լուծումներ:

### **Աշխատանքի խնդիրներն են՝**

- բացահայտել նախագծային մեթոդի կիրառման շրջանակները,
- առանձնացնել կրտսեր դպրոցականների գործունեության տեսակները:

**Հետազոտության տեսական նշանակությունն է ցույց տալ,** որ նախագծի մեթոդը սկզբունքորեն նոր չէ համաշխարհային մանկավարժության մեջ: Վերջին տարիներին կենցաղային կրթության կրթության նկատմամբ աճել է հետաքրքրությունը կրթության կազմակերպման այս ձևի նկատմամբ, ինչը հնարավորություն է տալիս երեխաներին սովորեցնել գիտելիքներ ձեռք բերելու ունակություն իրենց գործունեության միջոցով: Այս մեթոդը կենտրոնացած է աշակերտների ինքնուրույն գործունեության վրա, ուսուցչի դերը մշտական խորհրդատվական օգնությունն է:

**Հետազոտության գործնական նշանակությունն է բացահայտել, որ** նախագծային մեթոդը ուսուցման այնպիսի եղանակ է (մեթոդ է), որի դեպքում սովորողն անմիջապես ներառվում է ակտիվ իմացական գործընթացի մեջ, ինքնուրույն ձևակերպում է իր խնդիրը, իրականացնում անհրաժեշտ տեղեկատվությունների հավաքագրում,

## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՄԵԹՈԴԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Նախագծային մեթոդը միշտ ենթադրում է ինչ-որ խնդրի լուծում, որը նախատեսում է մի կողմից տարբեր մերոդների կիրառում, մյուս կողմից գիտության, տեխնիկայի, հմտությունների, ստեղծագործական տարբեր ոլորտների գիտելիքների ինտեգրում: Ծրագրի մեթոդով աշխատելը ներառում է ոչ միայն խնդրի առկայությունն իրազեկում, այլև դրա բացահայտման, լուծման գործընթաց, որը ներառում է գործողությունների հստակ պլանավորում, այս խնդրի լուծման պլանի կամ վարկածի առկայություն, հստակ բաշխում:

Նախագծային ուսուցման մեթոդը ուսումնաճանաչողական և համա-տեղ աշխատանքի կազմակերպման ձև է, որում ներգրավված են և՛ սովորողները, և՛ ուսուցիչները, և՛ ծնողները: Ուսումնական նախագծերը նպաստավոր պայմաններ են ստեղծում սեփական հնարավորությունները ճանաչելու և զարգացնելու համար:

Մեթոդի հիմքում ընկած են հետևյալ սկզբունքները:

- Ձևավորել ակտիվ, ինքնուրույն և կրթական գործում ակտիվ մասնակցությունունեցող սովորողների խումբ:
- Չարգացնել հետազոտական, ստեղծագործական որոնողական հմտություններ:
- Ձևավորել ինքնագնահատականը:
- Ձևավորել ոչ միայն գիտելիքները, այլև այնպիսի հմտություններ, որոնք սովորողները կկարողանան կիրառել իրենց պրակտիկ գործունեության մեջ:
- Չարգացնել ճանաչողական հետաքրքրությունները:
- Ապահովել կյանք-կրթություն իրական կապը:

Նախագծային մեթոդը կրթական մեթոդների մի ամբողջություն է: Այդ մեթոդները սովորողներին հնարավորություն են տալիս ձեռք բերել գիտելիքներ ու կարողություններ կոնկրետ հանձնարարություն կատարելիս:

Հանրակրթական պետական նոր չափորոշով սահմանվել են ութ կարողունակություններ, որոնց զարգացման ամենաարդյունավետ մեթոդը նախագծային մեթոդն է:

Սովորողի դերը մոտիվացնող է: Պասիվ լսողից դառնում է ակտիվ մասնակից, գործնունեություն իրականացնող, հետազոտող, հայտնագործող: Նա կարողանում է զգալ սովորածի օգտակարությունը և վայելել գիտելիք ունենալու հմայքը ու աշխատանքի բերկրանքը:

Մեծ է նախագծային ուսուցման դերը ԿԱՊԿՈՒ աշակերտների համար: Դպրոցական ծրագրում ներառելով՝ հավասար հնարավորություններ են ստեղծում բոլոր սովորողների համար, համակողմանի զարգացած քաղաքացի ձևավորելու համար:

Հետադարձ կապն այս մեթոդի կարևոր բաղադրիչ է: Ուսուցիչները կարող են հետադարձ կապի միջոցով գնահատական տալ աշակերտների կատարած աշխատանքին և օժանդակել նրանց բացահայտել բարելավման ենթակա ոլորտները: Աշակերտները նույնպես կարող են անդրադառնալ իրենց կատարած աշխատանքներին, բացահայտել այն ռազմավարությունները, որոնք ավելի լավ արդյունք են ապահովել: Արդյունավետ ուսուցման մեծագույն պահանջներից են ինտեգրված, պատճառաբանված ուսուցումը/ինչու՞ է սովորում, որտե՞ղ է կիրառելու/, քննադատական մտածողության զարգացումը: Այս մեթոդի հիմնադրույթն է. «Այն ամենը, ինչ սովորում եմ, գիտեմ, թե ինչի համար է ինձ անհրաժեշտ, որտեղ և ինչպես կարող եմ կիրառել այդ ձեռք բերված գիտելիքները»:

Նախագծային մեթոդը ստեղծում է նպաստավոր պայմաններ հետևյալ կարողությունների և հմտությունների ձևավորմանն ու զարգացման համար.

1. Ռեֆլեկտիվ հմտություններ
2. Որոնողական, հետազոտական հմտություններ
3. Համագործակցային հմտություններ
4. Կառավարման կարողություններ, հմտություններ

5. Շնորհանդեսների պատրաստման հմտություններ

6. Ներկայացման հմտություններ

Ըստ հանրակրթության պետական չափորոշի՝ «Ես և շրջակա աշխարհը» ուսումնական առարկան «Բնական գիտություններ» և «Հասարակական գիտություններ» ուսումնական բնագավառները ներկայացնող ինտեգրված պետական պարտադիր առարկա է երկրորդից չորրորդ դասարանների համար: Յոթից տասը տարեկան հասակն ամենալավ տարիքն է համագործակցության, փոխըմբռնման, մարդու իրավունքների հիմնախնդիրները հասկանալու և վերլուծելու համար: Այս ժամանակաշրջանը սոցիալական ինքնագիտակցության աճի ժամանակաշրջանն է, և պետք է այս տարիքում ուսումնական գործընթացում քննարկվեն արդարացի վերաբերմունքի, սեփական արժանապատվության զգացումի, հանդուրժողականության, դիմացինի նկատմամբ հարգանքի և բարյացկամության ձևավորմանն ուղղված հարցերը: Այս տարիքում երեխայի համար շատ կարևոր է լինել կոլեկտիվի լիիրավ անդամը, ընդունված լինել կոլեկտիվի կողմից, պատկերացումներ ունենալ շրջակա միջավայրի, բնության, դրա զարգացմանն ուղղված աշխատանքների մասին:

«Ես և շրջակա աշխարհը» առարկան ունի բնապահպանական դաստիարակության մեծ հնարավորություն: Առարկայի ուսումնասիրման ընթացքում սովորողները ճանաչում են շրջակա աշխարհը, ծանոթանում են այնտեղ կատարվող բնական երևույթներին, օբյեկտներին, մարդ-բնություն փոխհարաբերություններին, ճանաչում են իրենց օրգանիզմը, սովորում են անձնական հիգիենայի և խնամքի կանոնները: Ձևավորվում է առողջ ապրելակերպի մշակույթ:

Նախագծային աշխատանքն իրականացվում է երեք փուլով.

### **Նախագծային աշխատանքի առաջին փուլ**

Ստեղծվում են աշխատանքային խմբեր: Աշխատանքը կատարում են խմբով: Խմբի անդամների միջև կատարում են աշխատանքի բաժանում: Յուրաքնչյուրը ստանում է իր դերը և կատարվելիք աշխատանքը: Խումբն ունենում է ղեկավար,

որը նաև համակարգում է խմբի մյուս անդամների աշխատանքը: Նախագծի կատարումը վերահսկելու համար կազմում են աշխատանքային ժամանակացույց՝ միջանկյալ արդյունքներով:

.գրանցվում են արդյունքին ներկայացվող պահանջները, նախագծի

խնդիրները, արդյունքին հասնելու ճանապարհին հանդիպող դժվարությունները:

### **Աշխատանքի երկրորդ փուլ**

- Նախագծի իրականացման ընթացքում կատարվում են հետազոտական աշխատանքներ,
- նախագծի արդյունքի ներկայացում/արդյունքը պետք է ունենա հասարակական արժեք:
- աշխատանքի գնահատում,
- ստացված արդյունքի համապատասխանությունը սկզբնական պահանջներին:

### **Աշխատանքի երրորդ փուլ**

Նախագիծը ենթադրում է վերանայում, ծրագրի կիրառման արդյունքում նկատված թերությունների, ստացված դիտողությունների, առաջարկությունների քննարկում և համապատասխան փոփոխությունների կատարում:

- Կատարված աշխատանքի ներկայացում,
- Սովորողը պիտի կարողանա ներկայանալ և ներկայացնել,
- Համառոտ նկարագրել կատարված աշխատանքը՝ ինչ խնդիր են դրել, ինչու են ընտրել հենց այդ թեման, ինչպիսին է աշխատանքի արդյունքը, որն է նախագծի արդյունավետությունը,
- խոսել նախագծի ընթացքում ծագած դժվարությունների և աջակցությունների մասին,
- պետք է հիմնավորել՝ աշխատանքի ընթացքում ինչն են համարում արդյունավետ, իսկ ինչը՝ օգտակար,



- վերաբերմունք արտահայտել՝ կոնկրետ ներկայացնողի համար որքանով է օգտակար այդ նախագծին մասնակցելը, ինչ սովորեց, ինչը ճշտեց, ինչ է կարողանում ավելի լավ անել աշխատանքը կատարելուց հետո, ինչը ինքը կկիրառի հետագայում:

## Նախագծային աշխատանքի իմ փորձը

### ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ



*Մասնակիցներ- Շինուհայրի միջնակարգ դպրոցի 2-րդ դասարանի աշակերտներ*

*Վայրը-Շինուհայրի միջնակարգ դպրոց*

*Նախագծի թեման՝ «Ինչո՞վ ենք սնվում: Վիտամիններ»*

*Ինտեգրվող թեման՝ Գնումներ*

### Խնդիրներ՝


1. Հասկացություն տալ սովորողներին այն մասին, որ առողջությունը կախված է առողջ սննդակարգից: Մնունդը պետք է լինի ոչ միայն համեղ՝ նաև առողջարար:

2. Նկարագրել՝ ինչպիսին պետք է լինի առողջ և սննդարար ուտելիքի պարունակությունը, ընդունման պարբերականությունը և անվտանգությունը:
3. Տարբերակել առողջ և վնասակար սնունդը:
4. Խոսել մարդու առողջության համար օգտակար վիտամինների մասին:
5. Կարևորել առողջ սննդի ընտրությունը գնումներ կատարելիս:
6. Զարգացնել ինքնուրույնություն, նախաձեռնություն, համագործակցություն:
7. Ակտիվացնել խոսքը, ամրապնդել երկխոսությունը, պատասխանել հարցերին

### **Նախնական աշխատանքներ**

1. Զրույցներ առողջության և առողջ ապրելակերպի մասին:
2. Օգտակար վիտամինների մասին ֆիլմերի դիտում:
3. Ճանաչում ենք վիտամինները՝ A,B,C,D, և նկարների միջոցով իմանում ենք, որ մթերքների մեջ են պարունակվում
4. Զրույց՝ «Ինչպե՞ս կատարել ճիշտ գնումներ»:

Ժամկետը՝ 1 ամիս



Վիտամինները (լատիներեն «վիտա»՝ կյանք բառից) կենսաբանորեն ակտիվ օրգանական միացություններ են, որոնք անհրաժեշտ են օրգանիզմի

բնականոն նյութափոխանակության ու կենսագործունեության համար և անփոխարինելի են:

Դասարանը բաժանվում է 4 խմբի՝ A, B, C, D: Յուրաքանչյուր խումբ ուսումնասիրում է իր համապատասխան վիտամինը:

## **Վիտամին A**

Անհրաժեշտ է լիարժեք տեսողության և օրգանիզմի բնականոն աճի համար: A վիտամինի անբավարարության հիմնական հատկանիշը լուսավախությունն է, գիշերային կուրությունը (հավկուրություն): A վիտամինը պարունակվում է կենդանական ծագման մթերքներում՝ կենդանիների և ձկների յարդում, խավիարում, ձկան յուղում, կարագում և յուղում, պանրում, ձվի դեղնուցում: Բուսական մթերքներում՝ գազարը, լոլիկը, կարմիր տաքդեղը, կանաչ սոխը, թրթնջուկը, հազարը, մասուրը, ծիրանը, չիչխանը, արոսենու պտուղ մթերքների մեջ են պարունակվում:

## **B խմբի վիտամիններ**

Անհրաժեշտ է հատկապես օրգանիզմում ածխաջրերի նյութափոխանակության համար: Թիամինի բացակայության կամ զգալի պակասի հետևանքով առաջանում է նյարդային համակարգի ծանր հիվանդություն: Սննդի մեջ պետք է ընդգրկել ձավարեղեն (հատկապես՝ հնդկացորեն, վարսակաձավար), կոպիտ աղացած ալյուրից թխված հաց:

## **C վիտամին**

Վիտամին C ամրապնդում է ողջ օրգանիզմը, օգնում է պաշտպանվել մրսածության դեմ: Անբավարարության սկզբնական շրջանում նկատվում են ընդհանուր թուլություն, թորշոմածություն, արագ հոգնելիություն, քնկոտություն, գլխապտույտ: C- վիտամին պարունակում են՝ հատապտուղները, բանջարեղենը և ցիտրուսային մրգերը: Օրական պահանջը լրացվում է կաղամբի, կարտոֆիլի, կանաչ սոխի, լոլիկի հաշվին:

## **D վիտամին**

D վիտամինը օգտակար է ոսկորների ճիշտ ձևավորման համար: Սովորաբար D վիտամինը առաջանում է մարդու մաշկում՝ անդրամանուշակագույն ճառագայթների

ներգործությամբ: D վիտամինի աղբյուր է ձկների լյարդի ճարպը: Ոչ մեծ քանակությամբ պարունակվում է կարագում, ձվի դեղնուցում, ձկան յուղում:

### **Անհրաժեշտ նյութեր**

1. Միանգամյա օգտագործվող ափսեներ, ըստ սովորողների քանակի
2. պլատմասե դանակներ, սովորողների քանակին համապատասխան
3. Սննդային տախտակներ
4. Մրգեր և բանջարեղեն ( սովորողները բերում են տներից)

Սովորողները ներկայացնում են մրգերը և բանջարեղենը: Հասկացանք, թե նրանց մեջ ինչ օգտակար վիտամիններ կան և առողջ լինելու համար ի՞նչ սնունդ պետք է շատ ուտել: Իմացանք, որ այդ մրգերն ու բանջարեղենը գնել են և դրանց համար վճարել են: Այնուհետև որոշեցինք այդ միրգ և բանջարեղեններով պատրաստել համեղ և օգտակար աղցաններ:

Կճաշակեն պատրաստած աղցանը և կգնահատեն:

### **Արդյունքը՝**

1. Կզարգանա գիտելիքներ վիտամինների մասին:
2. Կճանաչեն իրենց օրգանիզմին օգտակար և անհրաժեշտ վիտամիններն ու սննդամթերքները:
3. Ավելի ուշադիր կլինեն իրենց առողջության նկատմամբ:
4. Կիմանան մթերքների օգտակար հատկությունների մասին, և նրանց կարևորությունը մեր օրգանիզմի համար:
5. Կսովորեն կատարել ճիշտ գնումներ:



## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախագծային մեթոդը հետազոտական, պրոբլեմային, ստեղծագործական մերոդների համադրություն է, որի հիմքում ընկած է սովորողի ճանաչողական հմտությունների, սեփական գիտելիքներն ինքնուրույն ձևակերպելու, տեղեկատվական տարածքում կողմնորոշվելու, քննադատական և ստեղծագործական մտածողության ձևավորումն ու զարգացումը:

Նախագծային աշխատանքը նպաստում է երևակայության, հիշողության զարգացմանը, նյութի արդյունավետ յուրացմանը, խթանում է ն' համագործակցային կարողությունների ձևավորմանը, ն' արթնացնում ոգևորություն:

Տարրական դպրոցում «Ես և շրջակա աշխարհը» ուսումնական առարկան կոչված է օգնելու երեխային ճանաչել իրեն ոչ միայն որպես անհատ, այլև որպես հասարակության մասնիկ: Դասընթացի օգնությամբ կրտսեր դպրոցականը սկսում է «կառուցել» իր սեփական աշխարհը՝ գծելով իր պատկերացումների, մտքերի ու նախասիրությունների շրջանակը:

Կրտսեր դպրոցականի պատկերացումները ընդլայնվում են շրջակա աշխարհի հետ ծանոթացման շնորհիվ:

«Ես և շրջակա աշխարհը» առարկան ունի էկոլոգիական դաստիարակության մեծ ներուժ:

Շատ կարևոր է նկատի ունենալ, որ այս դասընթացի արդյունքում ձեռք բերված գիտելիքները, կարողությունները և հմտությունները արժեքավոր են որպես հենք նոր գիտելիքների համար:

## ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Ես և շրջակա աշխարհը» -3: Հանրակրթական դպրոցի 3-րդ դասարանի դասագիրք, /Ա.Հովսեփյան, Ա. Կարապետյան, Գ. Հովհաննիսյան և այլք
2. Կարապետյան Ն. Զ., «Բնության նկատմամբ սովորողների արժեքային վերաբերմունքի ձևավորման մանկավարժական տեխնոլոգիաները
3. Ասատրյան Լ., Կարապետյան Ն., «Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված դասընթացի դասավանդման մեթոդիկա
4. Է. Ս. Հայրապետյան. «Բնության պահպանության հիմունքներ»